ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2024 թվական թիվ 232-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 08-077-0108-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով հողամասի սեփականատեր՝ Էդվարդ Տարոնի Մանուկյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրում գտնվող 08-077-0108-0018 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 0,6 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակություն՝ անասնապահական տնտեսություն հիմնելու և անասնագոմ կառուցելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը սահմանված կարգով արտացոլել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -21 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

11 հոկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան